



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ (ՆԱԽԱԳԾԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ) ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Ջոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեժլումյանի և Կարեն Սարգսյանի,

քննարկելով Պալատի ընդհանուր ժողովի 11.02.2012թ. թիվ 1/3-Լ որոշմամբ հաստատված Պալատի կանոնադրության փոփոխությունների և լրացումների մշակման (նախագծի հաստատման) և ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնելու հարցը,

## Պ Ա Ր Ձ Ե Ց՝

Պալատի կանոնադրությունը հանդիսանում է Պալատի հիմնադիր փաստաթուղթը, որը նոր խմբագրությամբ հաստատվել է Պալատի ընդհանուր ժողովի 11.02.2012թ. թիվ 1/3-Լ որոշմամբ:

Գործող կանոնադրությունում առկա են կարգավորումներ, որոնք թերի (ոչ լիարժեք) են և Պալատի բնականոն գործունեությունն ապահովելու համար ենթակա են խմբագրման: Բացի այդ, որոշ հարաբերություններ կանոնադրությամբ կարգավորված չեն, ուստի անհրաժեշտություն է առաջացել մշակել և Պալատի ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնել Պալատի կանոնադրության փոփոխությունների և լրացումների նախագիծը (մշակման նախագիծ):

Պալատի գործող կանոնադրության փոփոխությունների և լրացումների՝ Պալատի կողմից մշակված նախագծով՝

- ✓ կատարվել են որոշ գործող կարգավորումների խմբագրումներ.
- ✓ լրացվել են նոր կարգավորումներ.

27 սեպտեմբերի 2019թ.

թիվ 18/10-Լ

✓ կատարվել են տեխնիկական բնույթի խմբագրումներ.

Կանոնադրության 15-րդ կետը սահմանում է, որ Պալատի խորհուրդը վերահսկում է Պալատի ֆինանսատնտեսական գործունեությունը, սակայն այդ գործունեության վերահսկման ընթացակարգը սահմանված չէ: Նման պայմաններում Պալատի խորհուրդը գտնում է, որ անհրաժեշտ է հստակեցնել այդ լիազորությունը՝ սահմանելով, որ Պալատի խորհուրդը հաստատում է պալատի ֆինանսատնտեսական վերահսկողության կարգը: Հետագայում նշված կարգով կսահմանվեն ֆինանսատնտեսական վերահսկողության չափանիշները և ընթացակարգերը:

Պալատն ունի իր պաշտոնական անվանումը, խորհրդանշանը և դրոշը, որի հետ կապված որոշում ընդունելու լիազորությունը նպատակահարմար է համարում վերապահել Պալատի խորհրդին:

Պալատի խորհուրդը, որպես Պալատի գործադիր, ինչպես նաև կարգապահական վարույթ իրականացնող մարմին, իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Պալատի խորհրդի նիստերի ընթացքում առաջանում են հարցեր, որոնք Պալատի կանոնադրությամբ կարգավորված չեն: Այս նպատակով Պալատի խորհրդի որոշմամբ հաստատվել է Պալատի խորհրդի նիստերի վարման կարգը, որով կարգավորվել են նիստում՝ տեսանկարահանում իրականացնելու, ձայնագրություն կատարելու, խորհրդի կազմակերպչական աշխատանքներին վերաբերող հարաբերությունները, ինչպես նաև՝ խորհրդի նիստին ներկա գտնվող անձանց համար վարքագծի կանոններ:

Այդուհանդերձ, Պալատի խորհուրդը գտնում է, որ Պալատի կանոնադրությամբ պետք է նախատեսել Պալատի խորհրդի նիստերի անցկացման կարգը (աշխատակարգը) սահմանելու՝ Պալատի խորհրդին վերապահված հստակ լիազորություն:

Պալատի խորհրդի իրավասությանը պետք է վերապահել նաև Պալատի փաստաթղթերի պահպանման նվազագույն ժամկետները սահմանելու հարցը:

Որոշակի փոփոխություններ և լրացումներ է անհրաժեշտ կատարել նաև Պալատի խորհրդի կողմից կարգապահական գործերի քննության և որոշումների ընդունման հետ կապված հարաբերություններում: Առանձին կարգավորման անհրաժեշտություն է առկա Պալատի խորհրդի իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև Պալատի խորհրդի անդամի լիազորությունների դադարման հարցերում:

Սույն որոշմամբ քննարկվող նախագծով կարգավորվել են նաև կարգապահական գործ նախապատրաստող անձանց լիազորությունների առանձնահատկությունները, այդ թվում՝ լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքերը և կարգը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով այլ պետության փաստաբանը կարող է իր այլ պետության փաստաբանի արտոնագրի հիման վրա Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական գործունեություն իրականացնել՝ սահմանված կարգով հավատարմագիր ստանալու պարագայում: Հավատարմագրի ստացման կարգը և այլ առանձնահատկությունները կարգավորված են «Այլ պետության փաստաբանին հավատարմագիր տալու և հավատարմագրի գործողությունը դադարեցնելու մասին» կարգով: Սակայն Պալատի խորհուրդը գտնում է, որ այլ պետության փաստաբանի

հավատարմագրման հետ կապված որոշ սկզբունքային հարցեր, օրինակ՝ հավատարմագրման ձևերը (ժամկետները) պետք է կարգավորվեն նաև Պալատի կանոնադրությամբ:

Սույն որոշմամբ քննարկվող նախագծով Պալատի գործող կանոնադրությունում կատարվել են նաև այլ փոփոխություններ և լրացումներ, որոնք խմբագրական՝ տեխնիկական բնույթի են:

Ամփոփելով վերոգրյալը և արձանագրելով լրացումների և փոփոխությունների մշակման արդյունքները,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, Պալատի կանոնադրության 16.5 կետի 1-ին ենթակետի,

Պալատի խորհուրդը միաձայն

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

**1. Հաստատել մշակման արդյունքում կազմված «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին» Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի որոշման նախագիծը՝ համաձայն հավելվածի:**

**2. ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնել ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության փոփոխությունների և լրացումների՝ սույն որոշմամբ հաստատված նախագիծը:**

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի  
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

27 սեպտեմբերի 2019թ.

թիվ 18/10-L

ք.Երևան